ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Գեղաշեն, 1-ին փողոց 30 Վարչական շենք, Հեռ. (060)866011, էլ.փոստ geghashen.kotayq@mta.gov.am

21.07.2020թ. N01/226-20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Ձեր հրապարակմանն ենք ուղարկում Գեղաշեն համայնքի ավագանու թիվ 6 և թիվ 7 նիստերի որոշումներն ու հավելվածները:
Առդիր մեկ փաթեթ

Համայնքի ղեկավար՝ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող Լ. Հովհաննիսյան
Հեռ.374(98)888-398

ԳԵՂԱՇԵՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵԼԻՑ No 226
«21» 07 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու 2020թվականի հուլիսի 10-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝

1) Համայնքի ղեկավարի հաղորդումը 2020թվականի երկրորդ եռամսյակի մասին:
2)Հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
3)Հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
4)Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
5)«Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:
6)«Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:
7)Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N65-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով, համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀՀ ֆինանսների նախար, 207023, Գեղաշեն
Հաշվետվություն
Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ
(02/01/20 - 30/06/20թ. ժամանակահատվածի համար)

		Տարեկան հաստատված պլան				Տարեկան ճշտված պլան			Փաստացի	
	Հոդվածի համար	Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը		այդ թվում
Եկամտատեսակները		(u.5+u.6)	վարչական մաս	Ֆոնդային մաս	(u.8+u.9)	վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	(u.11+u.12)	վարչական բյուջե	դային բյուջե
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ տող 1100 + տող 1200+տող 00)		131,620,000.00	131,620,000.00	0.00	133,136,000.00	133,136,000.00	0.00	63,251,938.00	63,251,938.00	0.00
ղ թվում՝ 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՒՐՔԵՐ (տող 1110 + տող 20 + տող 1130 + տող 1140 + ող 1150)	7100	12,950,000.00	12,950,000.00	X	12,950,000.00	12,950,000.00	X	4,603,754.00	4,603,754.00	X
ղ թվում՝ 1.1 Գույքային հարկեր շարժ գույքից (տող 1111 + ող 1112)	7131	4,620,000.00	4,620,000.00	X	4,620,000.00	4,620,000.00	X	1,946,754.00	1,946,754.00	X
ղ թվում՝ Գույքահարկ ամայնքների վարչական արածքներում գտնվող շենքերի շինությունների համար		720,000.00	720,000.00	X	720,000.00	720,000.00	X	243,942.00	243,942.00	X
ղի հարկ համայնքների արչական տարածքներում ինվող հողի համար		3,900,000.00	3,900,000.00	X	3,900,000.00	3,900,000.00	X	1,702,812.00	1,702,812.00	X
.2 Գույքային հարկեր այլ ւրբից	7136	8,100,000.00	8,100,000.00	X	8,100,000.00	8,100,000.00	X	2,319,800.00	2,319,800.00	X
ղ թվում՝ Գույքահարկ տահատամիջոցների համար		8,100,000.00	8,100,000.00	X	8,100,000.00	8,100,000.00	X	2,319,800.00	2,319,800.00	X

3 Տեղական տուրքեր (տող 301 + տող 11302 + տող 11303 տող 11304 + տող 11305 + տող 306 + տող 11307 + տող 11308 տող 11309 + տող 11310 + տող 311+տող 11312+ տող 11313 + ող 11314+տող 11315+ տող 316 + տող 11317+ տող 11318 տող 11319), այդ թվում՝	7145	230,000.00	230,000.00	X	230,000.00	230,000.00	X	337,200.00	337,200.00	X
ամայնքի վարչական արածքում նոր շենքերի, նությունների և ոչ հիմնական		0.00	0.00	X	0.00	0.00	X	95,000.00	95,000.00	X
ամայնքի վարչական արածքում ոգելից և կոհոլային խմիչքների և (կամ) ախոտի արտադրանքի ճառքի թույլտվության համար		200,000.00	200,000.00	X	200,000.00	200,000.00	X	212,200.00	212,200.00	X
ավաբանական անձանց և ահատ ձեռնարկատերերին ամայնքի վարչական արածքում՝ Առևտրի և		30,000.00	30,000.00	X	30,000.00	30,000.00	X	30,000.00	30,000.00	X
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + ող 1220 + տող 1230 + տող 240 + տող 1250 + տող 1260)	7300	104,870,000.00	104,870,000.00	0.00	106,386,000.00	106,386,000.00	0.00	53,919,300.00	53,919,300.00	0.00
5 Ընթացիկ ներքին աշտոնական դրամաշնորհներ՝ ոացված կառավարման այլ սկարդակներից (տող 1251 + ող 1252 + տող 1255 + տող 256) , որից՝	7331	104,870,000.00	104,870,000.00	X	106,386,000.00	106,386,000.00	X	53,919,300.00	53,919,300.00	X
ետական բյուջեից ոնանսական համահարթեցման ոգբունքով տրամադրվող ոտացիաներ		104,870,000.00	104,870,000.00	X	104,870,000.00	104,870,000.00	X	52,403,300.00	52,403,300.00	X
ետական բյուջեից բամադրվող այլ դոտացիաներ ող 1253 + տող 1254) այդ վում՝		0.00	0.00	X	1,516,000.00	1,516,000.00	X	1,516,000.00	1,516,000.00	X

յլ դոտացիաներ		0.00	0.00	X	1,516,000.00	1,516,000.00	X	1,516,000.00	1,516,000.00	X
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	7400	13,800,000.00	13,800,000.00	0.00	13,800,000.00	13,800,000.00	0.00	4,728,884.00	4,728,884.00	0.00
3 Գույքի վարձակալությունից կամուտներ (տող 1331 + տող 332 + տող 1333 + տող 1334)	7415	1,100,000.00	1,100,000.00	X	1,100,000.00	1,100,000.00	X	267,550.00	267,550.00	X
համայնքի սեփականություն համարվող հողերի արձակալության արձավճարներ		1,100,000.00	1,100,000.00	X	1,100,000.00	1,100,000.00	X	267,550.00	267,550.00	X
4 Համայնքի բյուջեի կամուտներ ապրանքների ատակարարումից և առայությունների մատուցումից տող 1341 + տող 1342+ տող 343)	7421	3,800,000.00	3,800,000.00	X	3,800,000.00	3,800,000.00	X	1,308,000.00	1,308,000.00	X
րենքով սահմանված եպքերում համայնքային իմնարկների կողմից առանց եղական տուրքի գանձման ատուցվող ծառայությունների ամ կատարվող որձողությունների դիմաց տացվող (գանձվող) այլ		3,800,000.00	3,800,000.00	X	3,800,000.00	3,800,000.00	X	1,308,000.00	1,308,000.00	X
5 Վարչական գանձումներ տող 1351 + տող 1352+տող 353), այդ թվում՝	7422	8,900,000.00	8,900,000.00	X	8,900,000.00	8,900,000.00	X	3,153,334.00	3,153,334.00	X
եղական վճարներ տող13501+տող13502+տող1350 +տող13504+տող13505+տող135 6+տող13507+տող13508+տող13 09+տող13510+տող13511+տող1 512+տող13513+տող13514+տող 3515+տող13516+տող13517+տ 13518+տող13519+տող13520) , այդ թվում՝		6,900,000.00	6,900,000.00	X	6,900,000.00	6,900,000.00	X	1,975,980.00	1,975,980.00	X

ամայնքի կողմից զմակերպվող մրցությունների և ուրդների մասնակցության համար		0.00	0.00	X	0.00	0.00	X	20,000.00	20,000.00	X
ամայնքի կողմից ղբահանության վճար արողների համար ղբահանության ծախսանքները զմակերպելու համար		3,500,000.00	3,500,000.00	X	3,500,000.00	3,500,000.00	X	1,034,780.00	1,034,780.00	X
ամուղ-կոյուղու համար այն ամայնքներում, որոնք բաառված չեն ջրմուղ-կոյուղու		3,400,000.00	3,400,000.00	X	3,400,000.00	3,400,000.00	X	921,200.00	921,200.00	X
ամայնքի վարչական արածքում ինքնակամ առուցված շենքերի, նությունների ինքնականացման համար հատներ		2,000,000.00	2,000,000.00	X	2,000,000.00	2,000,000.00	X	1,177,354.00	1,177,354.00	X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 31-Ա

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի հողային հաշվեկշռին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև N 22

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/20թ.)

Մարզ: Կոտայք (անվանում) — (Կոդ) 7

Համայնք: Գեղաշեն (անվանում) — (Կոդ) 549

(հեկտարներով)

NN	Դասակարգային խմբերի	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ: համայնքային: վերջնական հատկացված	համայնքային: ոչ	համայնքային: ընդամենը (5+6+7)	համայնքային: ոչ գյուղատնտեսական նշանակության	համայնքային: գյուղատնտեսական նշանակության	պետական: ընդամենը (9+10+11)	պետական: ոչ գյուղատնտեսական նշանակության	պետական: գյուղատնտեսական նշանակության	պետական: գյուղատնտեսական նշանակության ոչ գյուղատնտեսական նպատակներով տրամադրված	հասարակական օգտագործման հողամաս գ.-ցոի դիմաց ՀՀ-ում
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1,1	1. Գյուղատնտեսական	վարելահող		938,44	791,58		146,86		0,23	146,63					
1,2		բազմ տնկարկներ,													
1.2.1		այդ թվում[3]													
1.2.2		խաղողի այգի													
1.2.3		այլ բազմամյա													
1,3		խոտհարք		659,79	602,75		8,75			8,75	48,29			48,29	
1,4		արոտ		4289,48	5,15		2152,26		0,07	2152,19	2132,07		870,00	1262,07	
1,5		այլ հողատեսքեր		912,26	16,58		302,92			302,92	592,76			592,76	
1		Ընդամենը		6799,91	1416,00		2610,79		0,30	2610,49	2773,12		870,00	1903,12	
2,1	2.Բնակավայրերի	բնակելի		195,91	195,32		0,15		0,06	0,09					0,44
2.1.1		այդ թվում[3]		195,87	195,34		0,09			0,09					0,44
2.1.2		այգեգործական (ա													
2,2		հասարակական		4,91	1,34	0,02	1,25			1,25	2,30			2,30	
2,3		խառը													
2,4		ընդհանուր		31,56			31,56			31,56					
2,5		այլ հողեր		29,97	0,35		29,62			29,62					
2		Ընդամենը		262,35	197,01	0,02	62,58		0,06	62,52	2,30			2,30	0,44
3,1	3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ.	արդյունաբերության		0,33	0,31		0,02			0,02					
3,2		գյուղտնտեսական,		40,99	7,53		23,09		2,24	21,71	10,37			10,37	
3,3		պահեստարանների													
3,4		ընդերք		20,70							20,70			20,70	
3		Ընդամենը		62,02	7,84		23,11		2,24	21,73	31,07			31,07	
4,1	4.Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, հեռ. կապի	էներգետիկայի		0,00			0,00			0,00					
4,2		կապի		0,10			0,10			0,10					
4,3		տրանսպորտի													
4,4		կոմունալ		0,14			0,14			0,14					
4		Ընդամենը		0,24			0,24			0,24					
5,1	5. Հատուկ պահպանվող տարածքներ	բնապահպանական													
5.1.1		այդ թվում[3] արգելոցն													
5.1.2															
5.1.3		ազգային													
5,2		առողջարարական													
5,3		հանգստի													
5,4		պատմական և		19,52			7,63			7,63	11,89			11,89	
5		Ընդամենը		19,52			7,63			7,63	1189,00			1189,00	
6	6.Հատուկ նշանակության նպ.	Ընդամենը		20,35							20,35			20,35	
7,1	7. Անտառային	անտառ													
7,2		թփուտ													
7,3		վարելահող													
7,4		խոտհարք													
7,5		արոտ													
7,6		այլ հողեր													
7		Ընդամենը													
8,1	8. Ջրային	գետեր		1,99							1,99			1,99	
8,2		ջրամբարներ		0,84							0,84			0,84	
8,3		լճեր		9,45			0,43			0,43	9,02			9,02	
8,4		ջրանցքներ		2,15			0,34			0,34	1,81			1,81	
8,5		հիդրոտեխ. և		0,00			0,00			0,00					
8		Ընդամենը		14,43			0,77			0,77	13,66			1366,00	
9,1	9. Ճահճատային	աղուտներ													
9,2		ավազուտներ													
9,3		ճահիճներ													
9,4															
9,5		այլ անօգտագործելի													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ				7178,82	1620,85	0,02	2705,12		2,60	2703,38	2852,39		870,00	1983,23	0,44

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև 22ա

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների)

Մարզ[a] Կոտայք (անվանումը) 7 (կոդ)

Համայնք[a] Գեղաշեն (անվանումը) 549 (կոդ)

NN	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն, հողատեսք	Կոդ N/N	Ընդամենը ոռոգվող հողեր ¥2+3+4+5+6¤	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական	հանրային քաղաք	հասարակական	Օտարերկրյա պետություններ
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1,1	1. Գյուղատնտեսական	վարելահող		75,4	75,4				
1,2		բազմամյա տնկարկներ, ոնոամենոր							
1.2.1		այդ թվում[a] պտղատու այգի							
1.2.2		խաղողի այգի							
1.2.3		այլ							
1,3		խոտհարք							
1,4		արոտ							
1,5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)		75,4	75,4				
2,1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		159,4	159,2				0,2
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		159,4	159,2				0,2
2.1.2		այգեգործական (ամառանոցային)							
2,2		ընդհանուր օգտագործման							
2,3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		159,4	159,2				0,2
3	3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության								
4	4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոսմոսալ ենթակառուցվածքների								
5	5. Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7,1	7. Անտառային	անտառ							
7,2		թփուտ							
7,3		վարելահող							
7,4		խոտհարք							
7,5		արոտ							
7,6		այլ հողեր							
7		Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6)							
8	8. Ջրային								
9	9. Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ ¥1+2+3+4+5+6+7+9¤				234,7	234,5				0,2

Համայնքապետարան՝ /ստորագրություն, կնիք/

կատարող՝ /ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 32-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 1-թաղամաս 9-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող, հողամասի սեփականատեր Արմեն Պարույրի Ասատրյանին ուղղակի վաճառքով օտարել՝ 07-023-0042-0090-0009 կադաստրային ծածկագրի 0.12հա օրինական հողամասի 20%-ից ավել 0.017հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը:

2.Հողամասն ուղղակի վաճառքով օտարվում է տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 41310(քառասունմեկ հազար երեք հարյուր տասը) դրամով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՀԱՍՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 33-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունվարի 1-ի թիվ 186- Ն հրամանի պահանջները ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող սխալմամբ քաղաքացու փոխանցված 07-023-0065-0001 կադաստրային ծածկագրով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարել վերը նշված հողամասերի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 34-Ա

«ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել «Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական հաշվառման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Գեղաշեն համայնքի ավագանու 2020
թվականի հուլիսի 10-ի N 34-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Հաստատության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքը՝ հանձինս համայնքապետարանի:

«ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը համարվում է..... :

2.Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3.Հաստատության գտնվելու վայրն է՝ 2217, գ. Գեղաշեն, 1-ին փողոց թիվ 83/2/1:

4.Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5.Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6.Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7.Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8.Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9.Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10.Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11.Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

12.Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ

զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետելու նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

13.Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14.Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

15.Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16.Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17.Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18.Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19.Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխայի մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

20.Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման,

բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

21.Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

22.Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

23.Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

24.Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

25.Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

26.Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

27.Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

28.Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29.Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

30.Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

31.Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1)ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը.

2)հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3)հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4)հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5)հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6)հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7)հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

32.Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

33. Համայնքի ղեկավարը՝

1)սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2)վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3)կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4)լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

5)վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6)համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.

7)հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

8)իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

34.Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

35.Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

36.Տնօրենը՝

1)առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2)սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

3)նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

4)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

5)տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

6)աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

7)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

8)կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

9)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10)իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

11)վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

12)ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

13)կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

14)իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

37.Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

38.Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1)իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2)ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.

3)պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4)կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

5)ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

6)դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

7)կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

39.Դաստիարակը՝

1)պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

2)պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

3)մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

40. Երաժշտական ղեկավարը՝

1)տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

2)ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

41. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1)կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2)մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3)հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4)պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

42.Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

43.Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

44.Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

45.Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

46.Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

47.Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

48.Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

49.Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

50.Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

51.Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1)հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2)բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

52.Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

53. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 35-Ա

«ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Գեղաշեն համայնքի ավագանու 2020 թվականի
հուլիսի 10-ի N 35-Ա որոշման

«ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Աշխատողների քանակը՝ 24

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Դրույքի չափը (դրամ)	Ընդամենը աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	250,000	250,000
2	Մեթոդիստ, ուսումնական գծով տնօրենի տեղակալ	1	170,000	170,000
3	Դաստիարակ	5	96,000	480,000
4	Երաժշտության դաստիարակ	1	93,000	93,000
5	Լոգոպետ	0.5	93,000	46,500
6	Հոգեբան	0.5	93,000	46,500
7	Դաստիարակի օգնական	5	96,000	480,000
8	Բուժքույր	1	93,000	93,000
9	Հաշվապահ	1	170,000	170,000
10	Տնտեսվար	1	93,000	93,000
11	Խոհարար	1	93,000	93,000
12	Խոհարարի օգնական	1	93,000	93,000
13	Լվացարար	1	93,000	93,000
14	Օժանդակ բանվոր	0.5	93,000	46,500
15	Հավաքարար	1	93,000	93,000
16	Պահակ-հնոցապան	2	93,000	186,000
			1,805,000	2,526,500

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 36-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N65-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետի 13-րդ ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի վարչական տարածքում 2020 թվականին տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N65-Ն որոշմամբ հաստատված հավելվածներում նոր խմբագրությամբ ավելացնել հավելված 4-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՆԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 4
Հաստատված
Համայնքի ավագանու 2019թվականի
Դեկտեմբերի 13-ի N65-Ն որոշմամբ
Փոփոխված
Համայնքի ավագանու 2020վականի
հուլիսի 10-ի N 36-Ն որոշմամբ

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝2.5-6 տարեկան մեկ երեխայի հաշվարկով (ամիսը) սահմանել 5000/հինգ հազար/ դրամ

2.համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխայինը սահմանել 0 /զրո/ դրամ:

3.համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ 0-2.5 տարեկան մեկ երեխայի հաշվարկով (ամիսը) սահմանել 10000/տասը հազար/ դրամ